ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ՍՏԱՆԻՍԼԱՎ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲՏԱ նախարարության թվայնացման վարչության փորձագետի կողմից 2025 թվականի մարտի 23-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում իրականացված աշխատանքների վերաբերյալ

1. Թվայնացման վարչության գործառույթներին առընչվող օրենքների խորացված ուսումնասիրություն: Մասնավորապես՝ «Կիբեռանվտանգության Մասին ՀՕ-442-Ն Օրենքը», Տեղեկատվական Համակարգերի Կարգավորման Մարմնի Մասին Օրենքը, ինչպես նաև «ՀՀ ԲՏԱ Նախարարության Ներքին Կարգապահական Կանոնները Հաստատելու մասին 950-Ա Հրամանը», «ՀՀ ԲՏԱ Նախարարության N 950-Ա Հրամանում Փոփոխություններ և Լրացումներ Կատարելու Մասին 1763-Ա Հրամանը» և «ՀՀ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ N 697-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»:

2. Մասնակցել եմ «Կիբեռանվտանգության Ոլորտում Կիրառելի Միջազգային Ստանդարտների Ցանկը Սահմանելու Մասին» ենթաօրենսդրական ակտի մշակման աշխատանքներին: Մասնավորապես՝ կազմել եմ կիբեռանվտանգության ոլորտում կիրառելի միջազգային ստանդարտների բացատրագիր տեղեկանք՝ մատնանշելով ամեն մի ստանդարտի նշանակությունն ու ընտրության պատճառաբանությունը՝ հիմք ընդունելով «Կիբեռանվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-442-Ն օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը, 19-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը և 20-րդ հոդվածի 2-րդ մասը:

3. Կազմել եմ «Ամպային Ծառայություններ Մատուցող Կազմակերպությունների և Պետական Համակարգի Շահագրգիռ Կառույցների Մասնակցությամբ Աշխատաժողովի» օրակարգ՝ հիմք ընդունելով 2026 թվականի Հունվարի 13-ին ՀՀ Վարչապետի գլխավորությամբ կայացած արտագնա խորհրդակցության N Վ/06-2026 արձանագրության 3.2 կետը: